| Փաստ. անվանումը | Ուսանողների հեռացման և վերականգնման կարգ |
|---|---|
| Փաստ. N | ԵՄՀ/ԸԿ/ԾՄ-19-01 |
| Հաստատման ամսաթիվը | 11/07/2014 |
| Վերջին վերանայումը | 27/05/2020 |
| Հաստատող մարմինը | Գիտական խորհուրդ |
| Մշակող/պաշտոն, անուն ազգանուն/ | Աշխատանքային խումբ |
| Ներդրման/իրականացման պատասխանատու | Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր |

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

| Ամսաթիվ | Կատարված փոփոխություն | Անուն, ազգանուն, պաշտոն Ստորագրություն |
|---|---|---|
| 27.05.2020 | Կարգը մասնակիորեն խմբագրվել և համապատասխանեցվել է ԵՄՀ փաստաթղթերի կառավարման ընթացակարգի պահանջներին: | Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ |
| | | |
| | | |
| | | |

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողների՝ հեռացման (ազատման) և վերականգնման ընդհանուր պայմանները:

1.2. Ակադեմիական պարտք է համարվում կիսամյակի քննաշրջանի արդյունքներով՝ ներառյալ երկու վերահանձնման փուլերը, տվյալ առարկայի դասընթացի համար սահմանված կրեդիտը չհավաքելը:

1.3. Ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում քննաշրջանի արդյունքներով անհրաժեշտ կրեդիտները չհավաքելը:

1.4. Առարկայական տարբերություն է համարվում ուսանողի ուսումնառած պլանում չընդգրկված առարկան կամ որևէ առարկայից կրեդիտների մեկ երրորդից ավելի տարբերությունը:

1.5. Ուսումնառության ընդհատումը համալսարանից ուսանողի հեռացում կամ ազատումն է կամ ուսումնառության դադարեցումը:

## 2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ, ԱԶԱՏՈՒՄ

2.1. Ուսանողը հեռացվում է համալսարանից.

1. ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում;
2. համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքերում;
3. համալսարանի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում;

2.2. Ուսանողը ազատվում է համալսարանից.

1. իր դիմումի համաձայն;
2. այլ բուհ տեղափոխվելու դեպքում:

2.3. Համալսարանից ուսանողի ազատման հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման համաձայնսույն կարգի 2.1-ին կետով նախատեսված դեպքերի:

2.4. Ուսանողների ուսումնառությունն ընդհատվում է.

1. ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում;
2. առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում;
3. հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

2.5. Քննաշրջանի ընթացքում քննություններին չներկայացած կամ դրանք ձախողած ուսանողներին թույլատրվում է մինչև տվյալ կիսամյակի երրորդ շաբաթվա ավարտը անհատական ժամանակացույցով հանձնել ակադեմիական պարտքերը:

2.6. Ակադեմիական պարտքերի անվճար հիմունքներով մարումը իրականացվում է ռեկտորի հրամանով ձևավորված քննական հանձնաժողովներում: Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա վերջը:

2.7. Ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով համալսարանից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի, ակադեմիական պարտքերի մարման արդյունքների ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:

2.8. Համալսարանից հեռացման (ազատման) դեպքում ուսանողի դիմումի համաձայն, 3 աշխատանքային օրվա ընթացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը: Համալսարանի կողմից հաստատված ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:

2.9. Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույն 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը, վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

## 3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

3.1. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից, ուսուցման բոլոր ձևերում, տվյալ մասնագիտության համար լիցենզիայով սահմանված տեղերի շրջանակում, բացառությամբ սույն կարգի 2.4-րդ կետով սահմանված դեպքերում ուսումնառությունը դադարեցրած ուսանողների, որոնք վերականգնում են իրենց ուսանողական իրավունքներն այն պահից, երբ ընդհատել են, անկախ լիցենզիայով սահմանված տեղերի քանակից: Կարգի 2.1-ին և 2.2-րդ կետերին համապատասխան հաստատությունից հեռացված կամ ազատված ուսանողի ուսանողական իրավունքները, անկախ ուսուցման ձևից, վերականգնվում են ուսումնակությունն ընդհատելուց առնվազն մեկ կիսամյակ հետո:

3.2. Սույն կարգի 2.4-րդ կետի նշված դեպքերում ուսումնառությունը դադարեցրած ուսանողները վերականգնվում են մինչև ուսումնառության դադարեցումն ունեցած կարգավիճակի պահպանմամբ:

3.3. Չի թույլատրվում հավատարմագրում չունեցող բուհերի կամ մասնագիտությունների նախկին ուսանողների ուսանողական իրավունքները վերականգնել հավատարմագրում ունեցող բուհում կամ մասնագիտություններում:

3.4. Ուսանողական իրավունքների վերականգնման դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում: Վերականգնման դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը:

3.5. Առաջացած առարկայական տարբերությունների կամ նախկին կիսամյակներից ակադեմիական պարտքերի առկայության դեպքում ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դրական որոշում կայացնելիս համալսարանի ռեկտորի կողմից տրվում է կցագրման հրաման: Առարկայական տարբերությունների կամ ակադեմիական պարտքերի հանձնման ժամկետ է սահմանվում միչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

3.6. Ակադեմիական պարտքերի մարումը իրականացվում է ուսումնական պլանով նախատեսված քննաշրջանի ժամանակահատվածում՝ ներառյալ երկու վերահանձնումը:

3.7. Ուսանողական իրավունքները վերականգնող ուսանողի հրամանագրումը կատարվում է միայն անհրաժեշտ վճարումները կատարելուց հետո համալսարանի կողմից սահմանված կարգով և ժամկետներում: Ուսանողն ազատվում է նախկինում կրեդիտներ հավաքած առարկաների ուսումնական պարապմունքներից և ատեստավորումից: Ուսանողը վճարում է միայն այն առարկայական դասընթացների համար, որոնք ուսումնառելու է: Վճարը հաշվարկվում է ըստ դասընթացների ընդհանուր գումարային կրեդիտների քանակի:

3.8. Համալսարանից հեռացված (ազատված) ուսանողը վերականգնվում է այն կիսամյակում, որից նա հեռացվել (ազատվել) է, եթե վերականգնման պահին առարկայական տարբերություններն ու ակադեմիական պարտքերը չեն գերազանցում 20 կրեդիտը, բացառությամբ սույն կարգի 2.4-րդ կետով սահմանված դեպքերի: 20 կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր կիսամյակում, որի համար առարկայական տարբերությունների սույն կետում նշված պահանջը բավարարվում է:

3.9. Սույն կարգի 2.4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ուսումնառությունը դադարեցրած ուսանողը վերականգնվում է ուսումնառության դադարեցման պահից, եթե ուսանողն իր իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է ուսումնառության դադարեցման պատճառը վերանալու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում ձմեռային զորակոչի դեպքում և երեք ամսվա ընթացքում ամառային զորակոչի դեպքում՝ անկախ տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար լիցենզիայով սահմանված տեղերի քանակից, առաջացած առարկայական տարբերություններից ու ակադեմիական պարտքերից: Նշված ժամանակահատվածի ընթացքում վերականգնման դիմում չներկայացնելու դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:

3.10. Սույն կարգի 2.4-րդ կետի համաձայն ուսումնառությունը դադարեցրած ուսանողը վերականգնման պահին նախկին մասնագիտությամբ (կրթական ծրագրով) համապատասխան կուրսի բացակայության դեպքում՝ կարող է վերականգնվել հարակից մասնագիտությամբ (կրթական ծրագրով), իսկ վերջինիս բացակայության պարագայում՝ այլ մասնագիտությամբ (կրթական ծրագրով)՝ անկախ տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար լիցենզիայով սահմանված տեղերի քանակից, առաջացած առարկայական տարբերություններից ու ակադեմիական պարտքերից:

3.11. Վճարովի ուսուցման համակարգում վերականգնված ուսանողը կարող է մասնակցել ուսանողական նպաստի հատկացման (փոխատեղման) համար անցկացվող մրցույթին առնվազն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո: Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ ուսումնառությունը կարող են շարունակել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողները:

3.12. Վերականգնված ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգնման մասին հրամանի պատճենը, հաստատության հետ կնքած պայմանագիրը, միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթը և ուսման վարձավճարի վճարման անդորրագրի պատճենը պահվում են նրա անձնական գործում: